



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱԴԵՏ

0

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 04/05.1/52635-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Միրզոյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 121-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցության Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված հարցապնդման պատասխանը, գրությամբ բարձրացված հարցերի վերաբերյալ կառավարության դիրքորոշումը, և կառավարության կողմից արդեն իսկ ձեռնարկված քայլերի վերաբերյալ տեղեկատվությունը: Այսպես.

Նախ հարկ ենք համարում նշել, որ ինչպես ամրագրված է կառավարության ծրագրում, կառավարության՝ շրջակա միջավայրի կառավարման քաղաքականությունն ուղղված է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությանը, բարելավմանը, վերականգնմանը և ողջամիտ օգտագործմանը՝ հավասարակշռելով այն սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության հետ: Այս առումով կառավարության համար հիմնական խնդիր է նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի՝ օդի, կլիմայի, ջրի, հողերի, բուսական և կենդանական աշխարհի վրա վնասակար ազդեցությունները, բացառել բնական ռեսուրսների գերշահագործումը և ապօրինի օգտագործումը, ապահովել կանխարգելման միջոցառումների իրականացումը, որն էլ կառավարությունն իրականացնում է համապատասխան նախաձեռնությունների, միջոցառումների և ձեռնարկված քայլերի միջոցով:

Կառավարության քաղաքականությունը հանքարդյունաբերության ոլորտում ուղղված է թափանցիկության, հանրության առջև բարձր հաշվետվողականության ապահովմանը: Հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացմանը նպաստելու նպատակով Կառավարությունը ձեռնամուխ է եղել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մշակմանը: Կառավարության 2018 թվականի օգոստոսի 23-ի N933-Լ որոշման համաձայն՝ շրջակա միջավայրի և բնակչության առողջության համատեքստում հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռիսկերի վերհանման և տեխնիկական կարողությունների գնահատման նպատակով ներկայումս իրականացվում են ախտորոշիչ ուսումնասիրություններ: Դրանց արդյունքները դրվելու են հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության հիմքում: Այս աշխատանքները ներառված են

Կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում: Բացի այդ, ընդերքօգտագործման հետևանքով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները նվազեցնելու նպատակով կառավարությունը նախաձեռնել է ոլորտի կայուն հեռանկարային կառավարմանը միտված մի շարք ծրագրեր: Մասնավորապես՝

- կատարվում է Հանրապետության տարածքում ընդերքօգտագործման թափոնների լքված տեղամասերի, փակված օբյեկտների ուսումնասիրություն, գույքագրում, թափոնների բաղադրության ուսումնասիրություն,

- օրինակ՝ Ալավերդու պղնձի հանքավայրի արդյունահանման և գործարանի աշխատանքի արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոնների կառավարման, դրանց բացասական ազդեցությունների նվազեցման և ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման փաթեթի մշակման նպատակով շրջակա միջավայրի նախարարությունը կատարել է Մադան (Լեռնահանք) տեղամասում կուտակված, լքված թափոնների նմուշառման աշխատանքներ:

- նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից՝ Vanta™ ռենտգեն-ֆլուորեսցենտային (XRF) անալիզատորի կիրառմամբ կատարվել են ընդերքօգտագործման թափոնների բաղադրության ուսումնասիրության աշխատանքներ: Գնահատվել են կուտակված թափոնների ծավալները և դրանցով զբաղեցրած տարածքների մակերեսները: Մշակվել են իրադրային հատակագծեր, սողանքների, հողերի բնական տիպերի և բուսականության տարածման սխեմատիկ քարտեզներ: Կազմվել են շրջակա միջավայրի բնական բաղադրիչների հակիրճ նկարագրերը:

- ներդրվում է բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով իրականացվող մշտադիտարկումների համակարգ, ինչի նպատակով ընդերքօգտագործողները պարտավորվում են իրականացնել շրջակա միջավայրի աղտոտվածության մշտադիտարկումներ և ներկայացնել դրանց արդյունքները եռամսյակային և տարեկան կտրվածքով,

- ընդլայնվում և վերանայվում է շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի համակարգը,

- ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման փուլում սահմանվում են ընդերքօգտագործման թափոնների կառավարման պարտականությունները:

Համաձայն Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգերի՝ ընդերքօգտագործողները պարտավոր են իրականացնել բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ: Այդ տվյալները՝ եռամսյակային (մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի դեպքում) և տարեկան կտրվածքով, ներկայացվում են շրջակա միջավայրի նախարարություն: Սահմանված չափաքանակները գերազանցող աղտոտման վերաբերյալ նյութերը շրջակա միջավայրի նախարարությունը ներկայացնում է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին՝ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերն ապահովելու առաջարկով:

Շրջակա միջավայրին պատճառված վնասի հետևանքով բնակչության առողջությանը պատճառված վնասների ուսումնասիրությունների վերաբերյալ, հայտնում ենք, որ Առողջապահության նախարարության կողմից շարունակաբար իրականացվում է

բնակչության առողջության ցուցանիշների աճի և նվազման միտումները բացահայտելու նպատակով վերլուծություն՝ որի տվյալները հրապարակվում են https://www.nih.am/am/publications/report_yearbook_guide/1 կայքում, ինչպես նաև իրականացվում են աշխատանքներ դրանց պատճառների բացահայտման ուղղությամբ: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ շրջակա միջավայրի և այլ գործոնների մարդու առողջության վրա բացասական ազդեցության պատճառահետևանքային կապը հաստատելու համար անհրաժեշտ է իրականացնել երկարատև և խորացված համաճարակաբանական հետազոտություններ՝ զուգորդելով լաբորատոր հետազոտությունների հետ՝ ներգրավելով գիտական ներուժը: Ներկայումս Առողջապահության նախարարությունը պաշտոնապես դիմել է Առողջապահության համաշխարհային կազմակերպությանը մեթոդաբանական աջակցություն ստանալու նպատակով, որի օգնությամբ՝ հիմնվելով ապացուցողական բժշկության և գիտականորեն հիմնավորված մեթոդաբանության վրա, կարելի է գնահատել շրջակա միջավայրի գործոնների ազդեցությունը մարդու առողջության վրա:

Ալավերդու պղնձաձուլարան.

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության Ալավերդու մետալուրգիական գործարանին 08.10.2012-07.10.2017թթ. ժամանակահատվածի համար տրամադրվել էր արտոնյալ պայմաններով թույլտվություն (ժամանակավոր արտանետման չափաքանակներ): «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի համաձայն այն տրամադրվել էր ժամանակավորապես՝ արտանետումների կրճատման միջոցառումների առկայության դեպքում, ինչը պետք է հանգեցներ ծծմբային անհիդրիդի արտանետումների կրճատմանը: Գործարանին առաջարկվել էր ներկայացնել ներդրումային ծրագիր, որն օրենքով սահմանված կարգով պետք է ենթարկվեր շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից Ալավերդի քաղաքում 2018 թվականի օգոստոս ամսին իրականացվել է ստուգում «Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերությունում, որի հետևանքով բացահայտված մի շարք խախտումների արդյունքում ընկերությունը ենթարկվել է վարչական տույժի, ինչպես նաև հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված վնաս 378 մլն 691 հզ. դրամ գումարի չափով: Ընկերությանը տրվել են հանձնարարականներ խախտումները վերացնելու մասին՝ մասնավորապես ներդնել հեռացող գազերի մաքրման համակարգ արտանետվող ծծմբի երկօքսիդի քանակությունը նվազեցնելու համար: Ստուգման ավարտից հետո, 2018թ. չորրորդ եռամսյակից սկսած մինչ օրս, ընկերության գործունեությունը դադարեցված է:

Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ը Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում կատարում է փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Գործում է 3 անշարժ դիտակայան, որտեղ դիտարկումներն իրականացվում են միջին օրական կտրվածքով և 42 շաբաթական դիտակետ, որտեղ դիտարկումներն իրականացվում են միջին շաբաթական կտրվածքով: Դիտարկման արդյունքները տեղադրվում են <http://www.armmonitoring.am/page/5> կայքում:

2019 թվականի միջին ամսական տվյալների համաձայն Ալավերդի քաղաքում և

հարակից համայնքներում ծծմբի երկօքսիդի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից (ՍԹԿ) գերազանցումներ չեն դիտվել, բացառությամբ հունվար ամսին, երբ ՍԹԿ-ն գերազանցել է 1.1 անգամ:

Ալավերդի քաղաքի հարակից ազդակիր համայնքներում մթնոլորտային օդի մոնիթորինգն իրականացվում է 20 շաբաթական դիտակետում՝ պայմանագրային հիմունքներով: Ստորև աղյուսակ 1-ում ներկայացվում են Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում 2019 թվականին ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները.

Ամիս Միջին ամսական կոնցենտրացիա,

մգ/մ3

Հունվար 0.0544

Փետրվար 0.0426

Մարտ 0.0459

Ապրիլ 0.0396

Հունիս 0.0466

Հուլիս 0.0426

Օգոստոս 0.0397

Սեպտեմբեր 0.0416

Թեղուտ.

Թեղուտի պոչամբարի կայունության և անվտանգության վերաբերյալ տեղեկացնում ենք, որ Արտակարգ իրավիճակների նախարարությունը Թեղուտի հանքավայրի շահագործման աշխատանքների վերագործարկման նպատակով իրականացրել է արտադրական վտանգավոր օբյեկտի (հարստացուցիչ ֆաբրիկայի պոչամբարի) տեխնիկական անվտանգության փորձաքննություն և 08.07.2019թ.-ին տվել է դրական եզրակացություն: «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից շահագործվող պոչամբարը փորձաքննության իրականացման պահին համապատասխանել է տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջներին: «Թեղուտ» ՓԲԸ-ին առաջարկվել է կատարել նոր ուսումնասիրություններ պատվարի կայունության ուղղությամբ՝ հաշվի առնելով ՀՀ-ում իրականացվող սեյսմիկ գոտիների վերամշակման գործընթացը: Ներկայումս բուլղարական ընկերության կողմից իրականացվում են պատվարի անվտանգության նոր ուսումնասիրություններ: Աշխատանքները մեկնարկել են ս.թ. սեպտեմբերին, արդյունքները կամփոփվեն 6-7 ամսվա ընթացքում: Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը պարբերաբար այցելություններ և ուսումնասիրություններ է իրականացնում տվյալ օբյեկտում: Միաժամանակ, «Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերությունը ընդգրկել է 2020 թվականի Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ստուգումների տարեկան աշխատանքային ծրագրում, որի հիման վրա ընկերությունում կիրականացվի ստուգում:

Անտառվերականգնման աշխատանքներ.

ՄԱԶԾ «Հողերի և անտառի կայուն կառավարման ներդրումը հյուսիս-արևելյան Հայաստանի լեռնային լանդշաֆտներում» ծրագրի շրջանակներում մշակվել են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Գուգարքի, Եղեգնուտի, Իջևանի և Նոյեմբերյանի «Անտառտնտեսություն»

մասնաճյուղերի անտառկառավարման պլանները, սկսվել են Զիլիգայի, Ստեփանավանի և Տաշիրի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի պլանների մշակման աշխատանքները:

Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված է 125.7 մլն. դրամի հատկացում Սիսիանի, Ճամբարակի և Սևքարի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի անտառկառավարման պլանների մշակման նպատակով և 413.8 մլն դրամի հատկացում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի «Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ» միջոցառման համար:

Պետական բյուջեի, տարբեր երկրների հետ արդեն իսկ ձևավորված համագործակցության շրջանակներում, ինչպես նաև գործընկեր կազմակերպությունների ներգրավմամբ կիրականացվի մինչև 2020 թվականի 10-րդ ամսվա 10-րդ օրը 10 միլիոն ծառ տնկելու ծրագիրը:

Շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակվել և շրջանառության է դրվել «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում է հանել «արտադրական նշանակության անտառներ» հասկացությունը:

Պահպանության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Ստեփանավանի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում, որպես փորձնական ծրագիր, տեղադրվել են սենսորային հսկիչ սարքեր:

Սևանա լիճ.

Մարտունի, Գավառ և Վարդենիս քաղաքներում գործում են ջրերի մեխանիկական մաքրման կայաններ, իսկ Սևան քաղաքի մաքրման կայանը կառուցման փուլում է: Կառավարության 2019թ. սեպտեմբերի 30-ի «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2020 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» N 1239-Լ որոշման հավելվածով 2020 թվականին կատարման նպատակով նախատեսվել են մի շարք միջոցառումներ: Դրանք են՝

- Գավառի, Մարտունու և Վարդենիսի կեղտաջրերի մեխանիկական մաքրման կայաններին կից կենսաբանական մաքրման բաղադրիչի կառուցման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և ֆինանսների առկայության դեպքում մեկ պիլոտային բաղադրիչի տեղադրում,

- Սևանա լճի ջրհավաք ավազանում առաջացած կեղտաջրերի մաքրում՝ լճի անմիջապես ափամերձ տարածքում գործող հանգստի և սպասարկման օբյեկտներում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրում,

- Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանքների իրականացում,

- ցանցավանդակային ձկնաբուծական տնտեսության ազդեցության գնահատում Սևանա լճի էկոհամակարգի վրա՝ սնուցող նյութերի ազդեցության գնահատում, հատակային նստվածքներում որոշ ինդիկատորային ցուցանիշների (ընդհանուր ֆոսֆոր, ընդհանուր ազոտ, երկաթ) քանակության ավելացման գնահատում:

Հրապարակվել է շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար Սևանա

լճի ջրհավաք ավազանի աղտոտված գետերի հունների մաքրման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման հրավեր:

Քննարկվում է Սևանի կողակի պոպուլյացիան վերականգնելու նպատակով արհեստական վերարտադրության վերսկսելու ծրագիր, ինչը դիտարկվում է որպես Սևանա լճի էկոհամակարգում էվորոֆիկացումը զսպող գործոն:

2020 թվականից ուժի մեջ է մտնելու 2018 թվականի մարտի 2-ի «ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-126-Ն ՀՀ օրենքը, որով ամրագրված են կեղտաջրերի մաքրմանը և հեռացմանն ուղղված պարտադիր կատարման ենթակա դրույթներ: Ներկայումս գործում են 2006 թվականի մարտի 23-ի «Սևանա լճի ջրհավաք ավազանի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիների բնակավայրերում և բնակավայրերից դուրս օբյեկտների շահագործումից առաջացող կեղտաջրերի մաքրման մասին» ՀՀ կառավարության N 397-Ն որոշումը և ՀՀ բնապահպանության նախարարի 2003 թվականի դեկտեմբերի 10-ի «Ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակների հաշվարկի մեթոդիկան հաստատելու մասին» N 464-Ն հրամանը:

2019 թվականին ամենօրյա ռեժիմով ուսումնասիրություններ են իրականացվել Սևան-Հրազդանյան ոռոգման համակարգով Սևանա լճից բաց թողնվող ջրի արդյունավետ օգտագործման ուղղությամբ, ինչի արդյունքում 2019 թվականին ընթացքում Սևանա լճից հավելյալ ջրառ չի իրականացվել, ավելին՝ տարեկան առավելագույն սահմանված 170 մլն.մ3-ից, 2019 թվականին բաց է թողնվել 143.857 մլն.մ3 ջուր՝ խնայելով 26.143 մլն.մ3:

Համաձայն Կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 19-ի N1257-Ն որոշման, իրականացվում են Արարատյան դաշտի ազատ հոսքով խորքային հորերի լուծարման և կոնսերվացման աշխատանքներ, ինչի արդյունքում ստորերկրյա ջրային ռեսուրսների ջրատար հորիզոնները կբարձրանան՝ նպաստելով ոռոգման սեզոնին Սևանա լճից ջրի բացթողումների ծավալի կրճատմանը:

Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի Արծվանիկի պոչամբար.

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը 2019 թվականի հոկտեմբերի 17-ին Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի պոչատար խողովակի վթարի ահազանգը ստանալուց հետո անմիջապես արձագանքել է: Նմուշառված կեղտաջրի լաբորատոր հետազոտության արդյունքում հաշվարկվել է վնաս, այն գերազանցել է 500 հզ. դրամը, այդ իսկ պատճառով նյութերը տրամադրվել են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Սյունիքի մարզի դատախազություն:

Դեբեդ գետի հետ կապված.

Դեբեդ գետի ջրերը կոյուղաջրերով աղտոտման խնդիրների պարզաբանման նպատակով 2019 թվականի նոյեմբերի 12-ից ստուգումներ են իրականացվում «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունում: Իրականացվելու են նաև համալիր լաբորատոր հետազոտություններ:

Բյուջեում համապատասխան ֆինանսավորում չնախատեսելու վերաբերյալ.

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բնապահպանական ծրագրերի գծով յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով նախատեսվող ծախսերը չեն կարող պակաս լինել, քան այդ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարվա բնապա-

հպանական և բնօգտագործման վճարների, իսկ 2020 թվականից սկսած՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով փաստացի մուտքերի հանրագումարը:

Օրենքի 1.2-րդ հոդվածի 17-րդ մասի համաձայն՝ ծրագիրը միևնույն վերջնական արդյունքի հասնելուն ուղղված քաղաքականության իրագործման միջոցառումների (այսուհետ՝ ծրագրի միջոցառումներ) տրամաբանական խմբավորումն է:

Նույն հոդվածի 17.1-րդ մասի համաձայն՝ ծրագիրը միևնույն նպատակին հասնելուն ուղղված քաղաքականության իրագործման միջոցառումների (այսուհետ՝ ծրագրի միջոցառումներ) տրամաբանական խմբավորումն է:

Նույն հոդվածի 17.2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ծրագրի ներառում է տվյալ նպատակին ուղղված միայն մեկ՝ գլխավոր կարգադրիչի վերագրվող միջոցառումներ:

Նույն հոդվածի 17.3-րդ մասի համաձայն՝ ծրագրի նպատակը այն կոնկրետ սոցիալական կամ հասարակական խնդիրն է, որի լուծմանն ուղղված է ծրագիրը:

Նույն հոդվածի 18.1-րդ մասի համաձայն՝ ծրագրի միջոցառումը ծրագրի շրջանակներում քաղաքականության իրագործման նպատակով իրականացվող պետության միջամտությունն է, որն ուղղված է տվյալ ծրագրի համար սահմանված նպատակի իրագործմանը:

Նույն հոդվածի 19-րդ մասի համաձայն՝ վերջնական արդյունքները սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի այն փոփոխություններն են, որոնց ձգտում է հասնել պետությունը հանրության համար ծրագրերի միջոցառումների տեսքով սահմանված միջամտությունների միջոցով:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բյուջետային հարաբերությունները կարգավորվում են նույն օրենքով սահմանված բյուջետային համակարգի հիմքում դրվող սկզբունքներով:

Օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում բյուջետային համակարգը հիմնվում է հետևյալ ընդհանուր սկզբունքների վրա՝

ա) բյուջետային համակարգի միասնականություն.

բ) բյուջետային համակարգի մեջ մտնող տարբեր մակարդակների բյուջեների միջև բյուջետային մուտքերի և ելքերի տարանջատում.

գ) բյուջեների ինքնուրույնություն.

դ) բյուջեների մուտքերի և ելքերի արտացոլման լրիվություն.

ե) բյուջեների հաշվեկշռվածություն.

զ) բյուջետային ելքերի ամբողջական (համախառն) ծածկվածություն.

է) բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետություն.

ը) բյուջեների հրապարակայնություն.

թ) բյուջետային միջոցների հասցեագրվածություն և նպատակայնություն.

ժ) բյուջեների իրատեսություն:

Օրենքի 8-րդ հոդվածով սահմանված են բյուջետային համակարգի հիմքում դրվող սկզբունքները:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բյուջեների նախագծերը կազմվում են կառավարության գործունեության, ինչպես նաև համայնքների զարգացման ծրագրերին համապատասխան:

Օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական մարմիններն առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերը կազմելու և դրանք ներկայացնելու մեթոդական ցուցումների համաձայն կազմված իրենց և համակարգի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերը (որտեղ ցույց է տրվում կապն առաջիկա երեք տարվա պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հետ և ընդգծվում են առաջիկա երեք տարվա պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի նկատմամբ բոլոր զգալի շեղումները), իսկ դոտացիայի գումարները հաշվարկող մարմինը՝ դոտացիայի գումարի՝ ըստ առանձին համայնքների բաշխումը առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում ներկայացնում են պետական լիազորված մարմին:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բյուջեները կազմվում և կատարվում են՝ ըստ բյուջեների մուտքերի և ելքերի միասնական դասակարգման:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բյուջետային դասակարգումն ունի հետևյալ կառուցվածքը՝

- ա) բյուջեների եկամուտներ.
- բ) բյուջեների ծախսեր և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ.
- գ) բյուջեների դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներ.
- դ) բյուջեների պարտքեր:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բյուջեների ծախսերը և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները (այսուհետ՝ ծախսերը) դասակարգվում են ըստ՝

ա) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառնությունների.

- բ) գերատեսչական բաշխվածության.
- գ) ծախսերի տնտեսագիտական բովանդակության.
- դ) տարածքային բաշխվածության.
- ե) ծրագրերի:

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ բյուջեների ծախսերի ծրագրային դասակարգումը ծախսերի խմբավորումն է ըստ պետական մարմինների կողմից իրականացվող բյուջետային ծրագրերի և ծրագրերի միջոցառումների՝ նույն օրենքի 41.4-րդ հոդվածի 2-րդ մասի «ա», «բ» և «գ» կետերով սահմանված տեսակների:

Օրենքի 41.5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական բյուջեի մասին օրենքի նախագծի բյուջետային հատկացումներն ըստ պետական մարմինների սահմանող՝ կառավարության բյուջետային ուղերձի հավելվածում ներկայացվում են յուրաքանչյուր պետական մարմնի կողմից իրականացվող ծրագրերը և դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումները: Ծրագրերից յուրաքանչյուրի համար ներկայացվում են ծրագրի դասիչը, անվանումը, նպատակը, վերջնական արդյունքի նկարագրությունը և հատկացվող ֆինանսական միջոցները: Միջոցառումներից յուրաքանչյուրի համար ներկայացվում են միջոցառման դասիչը, անվանումը, նկարագրությունը և հատկացվող ֆինանսական միջոցները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կառավարության բյուջետային ուղերձի կազմում բերված, ինչպես նաև պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված

ծրագրերի և միջոցառումների գծով կառավարության սահմանած արդյունքային (կատարողական) ցուցանիշները ներկայացնող հավելվածը յուրաքանչյուր պետական մարմնի գծով բաղկացած է երկու մասից, ընդ որում՝

1) առաջին մասում ներկայացվում է յուրաքանչյուր պետական մարմնի ռազմավարական նպատակների համառոտ շարադրանքը.

2) երկրորդ մասում ներկայացվում են պետական մարմնի կողմից իրականացվող ծրագրերի միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կառավարության բյուջետային ուղերձի կազմում բերված, ինչպես նաև պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված ծրագրերի գծով Կառավարության սահմանած վերջնական արդյունքի ցուցանիշները ներկայացնող հավելվածում արտացոլվում են յուրաքանչյուր պետական մարմնի կողմից իրականացվող ծրագրերի գծով վերջնական արդյունքի կանխատեսվող ցուցանիշները և դրանց թիրախային ժամկետները:

Վերը նշված դրույթների համակարգային մեկնաբանությունից պարզ է դառնում, որ յուրաքանչյուր պետական մարմնի կողմից իրականացվող ծրագրերը և դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումները նախատեսվում են տվյալ պետական մարմնի կողմից պետական լիազորված մարմին ներկայացվող բյուջետային ֆինանսավորման հայտերում, որոնցում արտացոլվում են այդ ծրագրերի գծով վերջնական արդյունքի կանխատեսվող ցուցանիշները և դրանց թիրախային ժամկետները, իսկ պետական լիազորված մարմինը հաջորդ տարվա պետական բյուջեի նախագիծը կազմում է ներկայացված բյուջետային ֆինանսավորման հայտերի հիման վրա:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք որ «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը կազմվել է պետական բյուջեի նախագծի կազմման Օրենքով սահմանված կարգով՝ բյուջետային ֆինանսավորման հայտերի, արտաքին ու ներքին պարտավորությունների և հաջորդ տարում կանխատեսվող մուտքերի հիման վրա՝ հաշվի առնելով բյուջեների մուտքերի և ելքերի միասնական դասակարգումը:

Միաժամանակ հարկ է նկատի ունենալ, որ «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծով նախատեսվող և վեճի առարկա հանդիսացող կարգավորումը պետք է դիտարկել «Բյուջետային համակարգի մասին» օրենքի ոչ միայն առանձին կարգավորումների, այլև ընդհանուր սկզբունքների համատեքստում:

Սկզբունքներն արտացոլում են իրավունքի էությունը, բովանդակությունն ու դերը: Ուստի, իրավունքի նորմերի և սկզբունքների միջև կոլիզիայի դեպքում, որպես կանոն, ընդունված է առաջնահերթությունը տալ սկզբունքներին, քանի որ դրանք արտացոլում են տվյալ ճյուղի (ենթաճյուղի և այլն) համար ընդհանուր, օրինաչափ, բնորոշ գծերը:

Այսպես, «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի կարգավորումը լիովին համահունչ է «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 3-րդ և 8-րդ հոդվածներով ամրագրված բյուջետային համակարգի հիմքում դրվող սկզբունքներին:

«Բյուջետային համակարգի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության սկզբունքը, որը նշանակում է,

որ բյուջեների կազմման և կատարման ժամանակ պետք է ելնել նախատեսված արդյունքի բյուջետային միջոցների նվազագույն ծավալի օգտագործմամբ կամ բյուջեով նախատեսված միջոցների ծավալով լավագույն արդյունքի հասնելու անհրաժեշտությունից:

«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով ընտրվել է հենց նախատեսված արդյունքին բյուջետային միջոցների նվազագույն ծավալի օգտագործմամբ հասնելու ուղղությունը, որի դեպքում գործադիր իշխանության մարմինները պետք է ձգտեն բյուջեի միջոցների խնայողությանը:

Բացի այդ, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգավորումն ու «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվող կարգավորումը պետք է դիտարկել ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության համատեքստում:

Հատուկ նորմի նպատակը ընդհանուր նորմի հստակեցումը կամ կոնկրետացումն է, որն իրականացվում է հատուկ նորմով մանրամասներ, լրացումներ կամ բացառություններ սահմանելու եղանակով: Այսինքն՝ ընդհանուր նորմը կարգավորում է ավելի լայն հասարակական հարաբերություններ՝ կիրառելով ընդհանրացման ավելի մեծ չափ, իսկ հատուկ նորմը ընդհանուր նորմի համեմատ ավելի դետալացված կարգավորումներ է նախատեսում, քանի որ ավելի ամբողջական կերպով են հաշվի առնում հասարակական հարաբերությունների առանձնահատկությունները: Բացի այդ ընդհանուր և հատուկ նորմերի սահմանազատման հիմքում դրվում է դրանց կարգավորման ոլորտը կամ ծավալը. ժամանակը, սուբյեկտների շրջանակը, հասարակական հարաբերության առարկան, որոնց վրա տարածվում են և այլն:

Այսպիսով, վերոնշյալ վերլուծությունից պարզ է դառնում, որ «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի կարգավորումը հատուկ նորմ է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի համեմատ, և ուստի *Lex specialis derogat generali* (հատուկ նորմը վերացնում է ընդհանուրը) սկզբունքի ուժով մրցակցությունը լուծվում է հօգուտ «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսված կարգավորման:

Հարգանքով՝

X

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ